ՎԱՂԱՐՇ, ԼԱԵՐՏ, ՄԱՐԻՆԱ
ՎԱՂԱՐՇՅԱՆՆԵՐ

Журнал “Кино” №2 (23) 2014

Վաղարշ Վաղարշյան, Հրաչյա Ներսիսյան. «Առաջին սիրո երգը»

1959 թվականի հունիսին, երբ կյանքից 65 տարեկանում հեռացավ հայ մեծանուն դերասան, Հայաստանի թատերական ընկերության նախագահ, պրոֆեսոր Վաղարշ Վաղարշյանը, բեմարվեստի մեծ վարպետին հրաժեշտ տալու էին եկել տասնյակ հազարավոր մարդիկ: Ի դեպ, երբ 2 տարի անց, 1961-ին կյանքին հրաժեշտ տվեց հայկական բեմի մյուս հսկան՝ Վաղարշ Վաղարշյանի գործընկերն ու հարևանը (նրանք մի շենքում էին ապրում)՝ Հրաչյա Ներսիսյանը, ապա հուղարկավորության ժամանակ պատկերը նույնն էր, գուցեև ավելին: Հիմա Երևանում դժվար է նման բան պատկերացնել: Բոլորովին այլ էին նաև հասարակության արժեքային համակարգը և մշակութային ու սոցիալական չափանիշները: Եվ հենց այդ ժամանակներում էլ ծնունդ առավ և զարգացավ Թումանյանի, Չարենցի, Իսահակյանի, Սարյանի և այլ մեծ արվեստագետների ժամանակակցի՝ Վաղարշյան-դերասանի, խոհափիլիսոփայական խառնվածքի տեր անհատը, որի 120-ամյա հոբելյանը նշվում է այս տարի:

Իսկ կարելի՞ է արդյոք այդ մեծության մասին լիարժեք պատկերացում կազմել՝ Վաղարշյանի անկրկնելի տաղանդի, հանդիսականին գերող նուրբ ձայնի, պլաստիկայի մասին պատմող մեծաքանակ հոդվածների (որոնց մեծ մասը գրվել է 60-ական, 70-ական թվականներին), «Խասփուշ», «Լեռնային քայլերգ», «Առաջին սիրո երգը», «Անձամբ ճանաչում եմ» և «Արտակարգ հանձնարարություն», «Առաջին սիրո երգը» ֆիլմերում խաղացած էպիզոդիկ դերերի, ինչպես նաև նրա աստեղային՝ «Եգոր Բուլիչով» դերակատարումից հրաշքով պահպանված թատերական ներկայացման եզրափակիչ տեսարանի տեսագրության հիման վրա: Այս հարցին դժվար է պատասխանել, քանի որ Վաղարշ Վաղարշյան երևույթը՝ այդ անունը վաղուց արդեն լեգենդի է վերածվել, իսկ կենդանի Վաղարշյանին բեմում տեսած մարդկանց թիվն այսօր խիստ սակավ է: Երջանկահիշատակ Լուիզա Սամվելյանը 1974 թվականին «Էկրան» ամսագրում տպագրված «Մեծ ներգործության գաղտնիքը» և «Ֆիլմ» թերթում 1984 թվականին զետեղված «Նրբին ու ինտելեկտուալ» հոդվածներում (մեծ դերասանի 80 և 90-ամյա հոբելյանների կապակցությամբ) վերլուծության է ենթարկում տխուր և անուղղելի այն փաստը, թե ինչու հայ բեմի մեծ վարպետի արվեստը տեղ չունեցավ «Հայֆիլմի» դասական ժառանգության մեջ, որից տուժեցին

Վաղարշ Վաղարշյանը Եգոր Բուլիչովի դերում

Եղբայրներ
Աշոտ և Լաերտ Վաղարշյանները, 1962 թ.

թե՛ հայկական կինեմատոգրաֆը, թե՛ Վաղարշյանը: Դառնալով մեր մյուս մեծերին՝ Վաղարշ Վաղարշյանի ժամանակակիցներին, մեր կողմից նշենք, որ այս առումով ճակատագիրը շատ ավելի բարեհաճ գտնվեց, մասնավորապես, Հրաչյա Ներսիսյանի, Ավետ Ավետիսյանի, Դավիթ Մալյանի, Գուրգեն Ջանիբեկյանի նկատմամբ: Նրանց կինոդերերը, էկրանին կերտած վառ կերպարները սերունդների համար պահպանեցին այդ մեծ դերասանների արվեստը: Իսկ Վաղարշյանի արվեստը մնաց նրան բեմում տեսած քննադատների և հանդիսականների հուշերում: Ըստ Վաղարշյանի ժամանակակիցների, թատրոնի վերլուծաբանների՝ Ա. Գորկու պիեսի՝ Սունդուկյանի անվան թատրոնի «Եգոր Բուլիչով» բեմադրության մեջ մեծ արտիստը կերտեց ուժեղ բանականության տեր մի անհատի, որն օժտված էր ճակատագրի և մահվան դեմ ընդվզելու հզոր կամքով և բանականությամբ՝ նաև կյանքի հանդեպ ունեցած անհուն կարոտով: Նմանօրինակ կերպավորումը հնարավոր եղավ Վաղարշյանի դերասանական և մարդկային հուզականության մեծ ներուժի շնորհիվ: Մոսկվայում «Եգոր Բուլիչովը» բեմադրած Բորիս Զախավան, դիտելով հայ արտիստի խաղը, գրել է, որ «իր առջև բացվում էին ոչ միայն Բուլիչովի ներքնաշխարհը, այլև՝ Վաղարշյան- արտիստի խորը, հիանալի հոգին, նրա, որպես մտածողի, բանականությունը և պոետի սիրտը»: Ընդհանրապես, Վաղարշ Վաղարշյանի մասին գրել են այնպիսի մեծություններ, ինչպիսիք են Հովհաննես Թումանյանը, Ավետիք Իսահակյանը, Եղիշե Չարենցը, Մարտիրոս Սարյանը, Ռուբեն Սիմոնովը և ուրիշներ: Վաղարշ Վաղարշյանի 80-ամյակի առթիվ 1974 թվականին հայաստանյան գրեթե բոլոր պարբերականներում տպագրվեցին հայտնի թատերական և կինոքննադատների հոդվածները, որոնցում խորը վերլուծության են ենթարկվում նրա թատերական աշխատանքները: Այդ աշխատանքներից յուրաքանչյուրը մի իսկական իրադարձություն էր Խորհրդային Հայաստանի մշակութային կյանքում: Հեղինակները նաև ներկայացնում են Վաղարշյան մարդուն, Վաղարշյան արվեստագետին, դրամատուրգին, մանկավարժին: Մեծագույն այդ տաղանդի բազմակողմանիությունը ցայտուն կերպով դրսևորվում էր Սունդուկյանի անվան թատրոնի բեմադրություններում կերտած նրա բազմաթիվ կերպարներում: Հենց այստեղ է, որ հարկ է խոսել Վաղարշյան-դերասանի բազմահնչունության մասին՝ Համլետ, Եգոր Բուլիչով, Խլեստակով, Արբենին (Լերմոնտովի «Դիմակահանդեսում»), Պրոտասով («Կենդանի դիակ»-ում), Ասլան ամի (հենց իր՝ Վաղարշյանի «Օղակում» պիեսում), պրոֆեսոր Պոլեժաև, Եզովպոս (Ֆիգեյրեդուի պիեսում), Տրանիո, Ֆիրս, Պավել Առաջին (Մերեժկովսկու «Պավել Առաջին» պատմական դրամայում): Ահա Վաղարշյանի ստեղծած, իրարից չափազանց տարբեր կերպարների հակիրճ թվարկումը: Մեծ դերասանի «բազմաժանրության» մասին դիպուկ է արտահայտվել նրա տաղանդի մեծ երկրպագու Մարտիրոս Սարյանը. «Երբ ուզում ես մի քանի բառով բնորոշել Վաղարշ Վաղարշյանի դերասանական խառնվածքի բուն էությունը, մի պահ զգում ես, որ դա անհնարին է, ինչպես անհնարին է թվում, որ նույն դերասանը ի

վիճակի է շոշափելիության աստիճանի պլաստիկ բյուրեղացման հասնելով ստեղծել նույն կոնֆլիկտի ոլորտում գործող հակոտնյա կերպարներ»: Այդպիսի դերասան էր Վաղարշ Վաղարշյանը: Իրականության չափազանց սուր, կոնֆլիկտային ընկալումն էր, որ ինչպես երևում է կերպարանափոխման ենթարկվելու տաղանդի հետ համաձուլված՝ ունակ էր դարձնում Վաղարշյանին ստեղծելու այդպիսի բեմական կերպարներ: Լինելով ինտելեկտուալ խառնվածքի տեր դերասան, Վաղարշյանը նոր կերպար ստեղծելիս երբեք չէր գնում տրորված ճանապարհներով, նա բառիս բուն իմաստով «մտնում էր դերի մեջ» և տալիս բեմական պերսոնաժի վարքագծի նոր և համոզիչ մեկնաբանումը՝ միշտ նրա գործողությունը դիտելով որպես հասարակական տվյալ հարաբերություններով պայմանավորված վարքագիծ: Ստեղծում էր նա գլխավոր դրական թե գլխավոր բացասական գործող անձի կերպարը, երկու դեպքում էլ նա հագեցնում էր իր դերը ժամանակի գեղեցիկ իդեալների ակտիվորեն հաստատող պաթոսով: Այդպիսով սերտ շաղկապվում էին նրա արվեստում ռեալիզմը և հումանիզմը:

1942 թվականին՝ Հայրենական մեծ պատերազմի օրհասական տարում, բեմ բարձրացավ Վաղարշյան-Համլետը, բարձրացավ որպես մարտնչող արվեստագետ, աշխարհի ամենահայտնի պիեսում իր ծանրակշիռ խոսքն ասելու, նաև պատմական առաքելությունն իրականացնելու համար: Վ.Վաղարշյանի թոռնուհին՝ նկարիչ, անիմացիոն կինոյի բեմադրիչ Մարինա Վաղարշյանը, այժմ զբաղված է Խորհրդային Միության թատրոնի հայտնի վերլուծաբան և քննադատ Յոհան Ալտմանի Վաղարշյանին նվիրված ձեռագիր աշխատության որոնումներով:

Վաղարշյանների ընտանեկան արխիվում պահպանվել են մեծ դերասանին գրած Ալտմանի նամակները: Ալտմանի և Վաղարշյանի նամակագրական կապն ընդհատվում է 1947 թվականին, երբ հայտնի արվեստաբանը ձերբակալվում է և անհետ կորչում ստալինյան գուլագում: Մինչև այժմ էլ անհայտ է նրա գրքի ճակատագիրը:

Համաշխարհային կինեմատոգրաֆի պատմության մեջ մնացել են Համլետ-Լոուրենս Օլիվյեն և հատկապես Ինոկենտի Սմոկտունովսկու կերտած Դանիո արքայազնի կերպարը: Այսօր խորին ափսոսանքով կարելի է նշել, որ Վաղարշյան-Համլետից միայն լուսանկարներ են մնացել, նաև կորած մի ձեռագիր, որի հայտնաբերումը իսկապես երջանիկ մի անակնկալ կդառնար:

- Համառուսաստանյան թատերական ընկերության Շեքսպիրյան կաբինետի տնօրեն պրոֆեսոր Միխայիլ Մորոզովը ընդգծել է, որ Հայրենական մեծ պատերազմի խոշորագույն մշակութային երևույթը «Համլետի» բեմադրությունն է Սունդուկյանի անվան թատրոնում:



Կինոռեժիսոր Լաերտ Վաղարշյան, 1982 թ.

Այս բարձր գնահատականը վկայում է այն մասին, որ Երկրորդ աշխարհամարտի ծանրագույն տարիներին Հայաստանը բնավ մշակութային գավառ չէր: Այստեղ էր ստեղծագործում համաշխարհային մի մեծություն, որի արվեստը մենք այսօր՝ նրա 120-ամյա հոբելյանի օրերին, կրկին արժևորում ենք այնպես, ինչպես որ դա արվել է նախկինում:

Նա մեծ էր իր բոլոր մեծ ու փոքր դերակատարումներում, իսկ հզոր հուզականության կիզակետին հասած Վաղարշյան-Բուլիչովի՝ շեփորահարին ուղղորդող ողբերգական կոչը պտտվող բեմահարթակի վրա. «Փչիր, Գավրիլա, աշխարհի վախճանն է, փչի՛ր...» - հանդիսականներին 20 տարի շարունակ ցնցում էր: Երկու տասնամյակ շարունակ վաղարշյանական հոգու ալեկոծությունն ու հորդումը հայկական թատերական արվեստի խորհրդանիշն է եղել:

Փոքրիկ տեղեկանք: Վաղարշ Վաղարշյանը ծնվել է 1894 թվականին, Լեռնային Ղարաբաղի Շուշի քաղաքում: 1922-ին, որպես Դոնի Ռոստովում հիմնադրած Պետրոս Ադամյանի անվան հայկական թատրոնի արտիստ, շրջագայել է Հյուսիսային Կովկասի հայաբնակ վայրերում: 1923-ից Վաղարշյանը հաստատվել է Երևանում և դարձել Առաջին պետական

Վաղարշ Վաղարշյանի վերջին լուսանկարը, թոռնուհու՝ փոքրիկ Մարինայի հետ, 1959 թ.

թատրոնի դերասան: Նաև պիեսներ է գրել, զբաղվել է ռեժիսուրայով, թարգմանություններով: Վ.Վաղարշյանը ոչ միայն թատերական, այլև հասարակական գործիչ էր: 1938 թվականին արժանացել է ՀԽՍՀ ժողովրդական, իսկ 1954-ին՝ Խորհրդային Միության ժողովրդական արտիստի կոչմանը և ԽՍՀՄ պետական մրցանակի կրկնակի դափնեկիր էր: Հայկական բեմի համար մեծ թվով տաղանդավոր դերասաններ դաստիարակած Վ.Վաղարշյանի ընտանիքում հանրահայտ հոր գործի շարունակողը նրա որդին էր՝ կինոբեմադրիչ Լաերտ Վաղարշյանը, ով Յուրի Երզնկյանի հետ համատեղ բեմադրած «Առաջին սիրո երգը» մելոդրամայում մեծ արտիստին նկարահանեց երաժիշտ-վոկալիստի դերում: Լաերտ Վաղարշյանի ռեժիսորական աշխատանքների՝ հատկապես «Առաջին սիրո երգը», «Քաոս» և «Արամ Խաչատրյան» ֆիլմերի մասին շատ է գրվել և խոսվել: Ավելի սակավ են հիշատակումները «Հայֆիլմ» կինոստուդիայի տնօրենի և Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության առաջին քարտուղարի պաշտոններում նրա կատարած ու ձեռնարկած բազմաթիվ շնորհակալ գործերի, աշխատանքների և նախաձեռնությունների մասին: 60-ականների երկրորդ կեսին, երբ Լ.Վաղարշյանը «Հայֆիլմի» տնօրենն էր, Սերգեյ Փարաջանովը Հ.Բեկնազարյանի անվան կինոստուդիայում սկսեց «Նռան գույնի» նկարահանումները: Քչերն այսօր գիտեն, որ նաև Լաերտ Վաղարշյանն է Փարաջանովին հորդորել ու համոզել ֆիլմ նկարահանել Հայաստանում: Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության առաջին քարտուղարի պաշտոնում Լ.Վաղարշյանը նախաձեռնեց և իրականացրեց Դիլիջանի Կինեմատոգրաֆիստների տան շինարարական աշխատանքները: Մեծ է նրա ավանդը նաև Աշտարակի խճուղու հարակից տարածքում «Հայֆիլմի» մասնաշենքի կառուցման գործում: Ստուդիայում մուլտարտադրամասի ստեղծումը, հայկական անիմացիայի դարբնոցի ձևավորումը նույնպես Լաերտ Վաղարշյանի ջանքերի արդյունքն է: Լ. Վաղարշյան-բեմադրիչի երկրորդ ծնունդը կայացավ «Արամ Խաչատրյան» փաստավավերագրական չորսսերիանոց ֆիլմի նկարահանումների ժամանակ: Անտեսելով ծանր հիվանդությունը, նա շարունակ աշխատում էր հայկական մշակույթում արժեքավոր աշխատանքներ ստեղծելու մեծ ցանկությամբ ու նվիրումով:

Լաերտ Վաղարշյանի դուստրը, Վաղարշ Վաղարշյանի թոռնուհին՝ Մարինան, ով հոր նկարահանած «Աքսորյալ 011» և «Արամ Խաչատրյան» կինոնկարների բեմադրող նկարիչն է, Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտն ավարտելուց հետո, ռեժիսորներ Ստեփան Անդրանիկյանի, Ռաֆայել Բաբայանի, Էլլա Ավագյանի հետ միասին ստեղծել է մուլտիպլիկացիոն ֆիլմեր, իսկ 1986 թվականին «Դեբյուտ» կինոմիավորումում նկարահանել «Ֆլյուգեր» կարճամետրաժ մուլտֆիլմը: Այժմ Մարինան զբաղվում է գեղանկարչությամբ, որի ինքնատիպ գործերին անդրադարձել է նաև «+Կինո» ամսագիրը: Կանադայում, ԱՄՆ-ում, Գերմանիայում, Ֆրանսիայում, Ճապոնիայում, Ավստրալիայում, Դանիայում կազմակերպված ցուցահանդես-վաճառքների ժամանակ այդ երկրների արվեստագետները և գեղանկարչության երկրպագուներն ու սիրահարները ձեռք են բերել նրա կտավները, որոնք լավագույնս են արտացոլում Մարինա Վաղարշյանի ստեղծագործական խառնվածքը:

Ափսոս միայն, որ Մարինայի կտավները գնած արտերկրի քաղաքացիները չգիտեն, թե որ տոհմի շառավիղն է այդ կտավների հեղինակը և մեծագույն դերասանի ոգու մասնիկն է պարփակված զարմանալի գույների այդ աշխարհում:

Վադիմ Ղարիբյան